ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Նաիրիի համանքապետարանը ստորև ներկայացնում է Նաիրի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-26/2>> ծածկագրով գնման ընթացակարգի** արդյունքում **2026 թվականի մարտի 18-ին կնքված N <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-26/2>>** ծածկագրով պայմանագրում **2026 թվականի հունիսի 11-ին կատարված** փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի բնօրինակից սկանավորված տարբերակը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագիր կատարման ժամկետի երկարացում:

Փոփոխության նկարագրություն՝ Կողմերը համաձայնեցին կատարել Պայմանագրի կատարման ժամկետի երկարացում 30 օրացուցային օրով՝ մինչև 2026թ. հուլիսի 18-ը:

Փոփոխության հիմնավորում՝ 4 մայիս 2017թ-ի N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

<<18>> մարտ 2026թ. կնքված N *<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-26/2>>*

ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Եղվարդ <<11>>հունիս 2026թ.

Նաիրիի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Ն. Սարգսյանի**, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Լիլիթ-87>> ՍՊԸ-ն , ի դեմս տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից**, հիմք ընդունելով <<18>> մարտ 2026 թ. կնքված N *<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-26/2>>* գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1 **Երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2026թ. հուլիսի 18-ը:**
Պայմանագրի երկարաձգման հիմք է հանդիսանում 2026 թվականի հունիսի 9-ին <<Լիլիթ-87>> ՍՊԸ-ի կողմից ստացված N 2026/21 գրությունը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Նաիրիի համայնքապետարան	**<<Լիլիթ-87>> ՍՊԸ**
ք. Եղվարդ, Երևանյան 1	**գ. Զովունի 1-ին փողոց N127**
ՀՀ Ֆ/Ն գործառնական վարչություն	**<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ**
Հ/հ 900112101275	**Հ/հ 163678013117**
ՀՎՀՀ 03560239	**ՀՎՀՀ 01200017**
Համայնքի ղեկավար՝ Ն. Սարգսյան	**Տնօրեն՝ Վ. Պետրոսյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ